ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԻՎ ԳԲՔԱ-ՆԳ-2020/14 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՆՈՐ ԾԱԾԿԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԿԶԲԻՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/14, 31.01.2020թ.

Բողոք բերող անձ՝ «ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» գնանշման հարցում

Գնման առարկան՝ բժշկական պարագաների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝ Դադարեցնել N 5 արձանագրությամբ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին, 50-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին և նույն չափաբաժնի մասով ՆՏԱԴ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում,

իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան 1

Բողոք բերող ընկերություն՝ <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ

հասցե՝ ք. Երևան, Մարգարյան 37, տարածք 131

էլ. փոստի հասցե՝ intermedgroup@inbox.ru

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

հասցե՝ ք. Երևան, Բագրևանդի 5

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ՀՀ ՊՆ կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերում

ԲՈՂՈՔ

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 18.11.2019 թվականին հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 46 հոդվածի.

1 մասի համաձայն՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

3. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ 1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 50 հոդվածի.

2. Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ 1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ
ՄՏՄ N 3182
«31» 01 2020թ.

Հայտարարված վերոգրյալ ընթացակարգին մի շարք չափաբաժիններից զատ <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ հայտ է ներկայացրել նաև 50 չափաբաժնի համար:

Հայտերի բացման նիստի N 4 արձանագրության համաձայն՝ որը հրապարակվել է gnumner.am կայքում, ՆՏԱԴ գնահատող հանձնաժողովը որոշել է ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40 կետի 5 ենթակետի հիման վրա հրավիրել բանակցություններ:

Նշված արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 50 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ, իսկ ՆՏԱԴ գնահատող հանձնաժողովը որոշել է պահանջել հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

Սահմանված ժամկետում մեր կազմակերպության կողմից ներկայացվել են պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ այդ թվում նաև N 3.1 հավելվածը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Սակայն ՆՏԱԴ գնահատող հանձնաժողովի կողմից 15.01.2020 թվականին ստացվում է ծանուցում հետևյալ բովանդակությամբ. /Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով ընթացակարգին Ձեր կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

Ձեր կողմից ներկայացված 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված են.

1). կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ±0.01մմ,

3). կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ±0.01մմ,

6). կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ±0.01մմ,

7) կետով՝ Կորտիկալ պտուտակ-տրամագիծը կազմում է 3.5 -0.01մմ,

8) կետով՝ Արգելափակվող և կորտիկալ պտուտակների տրամագիծը կազմում է 3.5 ±0.01մմ, սպոնգիոզ պտուտակներինը 4,0±0.01մմ:

Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում /Հավելված 3.1/ նշված մեծությունները չեն համապատասխանում հրավերով սահմանված մեծությունների թույլատրելի շեղումներին, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը /16.01.2020թ.-20.01.2020թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Պահանջվող փաստաթուղթն անհրաժեշտ է ուղարկել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ Մ. Ամիրյանին, m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեով:/:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ուզում հրավիրել այն հանգամանքին, որ ծանուցման մեջ սխալ է նշված գնման ընթացակարգի ծածկագիրը:

Այնուամենայնիվ, մեր կազմակերպությունը շտկել և կրկին ներկայացրել է N 3.1 հավելվածը:

Սակայն կրկին անգամ ՆՏԱԴ գնահատող հանձնաժողովի կողմից ստացվում է ծանուցում հետևյալ բովանդակությամբ./Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով ընթացակարգին Ձեր կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի շտկված տարբերակները և պարզվել է, որ Ձեր կողմից ներկայացված 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունները շտկվել էին, բացառությամբ 8) կետով՝ սպոնգիոզ պտուտակների տրամագծի մեծությունը /4,0±0.01մմ/:/:

ՆՏԱԴ գնահատող հանձնաժողովը N 5 արձանագրությամբ կայացնում է մեր կազմակերպության հայտը մերժելու մասին որոշում 50 չափաբաժնի մասին, քանի որ առկա է 4,0±0.01մմ շեղում:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման.

47 կետի համաձայն՝ Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ

նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

48 կետի համաձայն՝ Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

<<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ վերոգրյալ անհամապատասխանության հետ կապված կից Գնումների հետ կապված բողոքներ բննող անձին տրամադրում ենք 50 չափաբաժնի

համար առաջարկված ապրանքի արտադրող Johnson&Jonhson ընկերության կողմից մեր կազմակերպությանը տրամադրված պաշտոնական տեղեկանք այն մասին, որ տեխնիկական բնութագրերում նշված ± 0,01 գրառումը նշանակում է արտադրողի կողմից թույլատրելի շեղում: /առդիր մեկ թերթ/:

Գտնում ենք, որ այս շեղման մասով մեր կազմակերպության հայտը մերժելու մասին որոշումը ոչ իրավաչափ է և չի բխում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով սահմանված նորմերից:

Բացի այդ, նույն ՆՏԱԴ գնահատող հանձնաժողովը և քարտուղարը թույլ է տվել ՀՀ կառավարության 526-Ն որոշման 48 կետի խախտում, քանի որ շտկված ապրանքի բնութագրում Կորտիկալ պտուտակ տրամագիծը նշվել է 3.5±0.01մմ, այսինքն կրկին առկա է ± 0.01մմ շեղում, սակայն այդ փաստը չի արձանագրվել և էական շեղում չի համարվել ՆՏԱԴ գնահատող հանձնաժողովի կողմից: Այսինքն կարելի է եզրակացնել, որ մի դեպքում ± 0.01 շեղումը ընդունելի է, իսկ մյուս դեպքում՝ ոչ: Այս պարագայում ՆՏԱԴ հանձնաժողովը կողմից չի ընդունվի նաև այն արդարացումը, որ դա տեխնիկական վրիպակի արդյունք է:

Իսկ եթե ամեն դեպքում պնդվի, որ դա տեխնիկական վրիպակի արդյունք է, ապա <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ին պետք է կրկին տալ հնարավորություն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար՝ կիրառելով թիվ 526-Ն որոշման 47 կետը:

Կրկին անգամ պետք է նշել, որ ծանուցման մեջ սխալ է նշված եղել գնման ընթացակարգի ծածկագիրը, ինչը նույնպես հիմք է հանդիսանում դադարեցնելու ՆՏԱԴ հանձնաժողովի N 5 արձանագրությամբ կայացված <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ հայտը մերժելու մասին որոշումը 50 չափաբաժնի մասով և ևս մեկ հիմք է առաջ գալիս կազմակերպությանը կրկին ծանուցելու և պահանջելու շտկել անհամապատասխանությունը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 50 հոդվածի 7 մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

gnumner.am կայքում զետեղված տեղեկատվության համաձայն՝ 29.01.2020 թվականից մինչև 03.02.2020 թվականները հրապարակվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի անգործության ժամկետը ավարտվում է 03.02.2020:

Փաստացի <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ վիճարկում է N 4, N 5 արձանագրություններով կայացված որոշումները 50 չափաբաժնի մասով և նույն չափաբաժնի մասով նաև պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ելնելով վերոշարադրյալից, <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում է դադարեցնել N 5 արձանագրությամբ <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ հայտը մերժելու մասին, 50 չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին և նույն չափաբաժնի մասով ՆՏԱԴ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումները:

Կից Բողոքներ քննող անձին է ներկայացվում <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ի տնօրենի նույնականացման քարտի և պետ. ռեգիստրի վկայականի պատճենները, Johnson&Jonhson ընկերության կողմից տրամադրված տեղեկանքի, ՆՏԱԴ հանձնաժողովի երկու ծանուցումների, N 3.1 սկզբնական և N 3.1 շտկված հավելվածները, բողոքարկման համար նախատեսված գումարը վճարելու փաստը հավաստող փաստաթղթի՝ վճարման անդորրագրի օրինակը:

Առդիր՝ 37 թերթ:

<<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ տնօրեն Ա. Դիլանյան